



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1724  
Ապրիլ 6, 1994

Արժանաշնորհ  
Տ. Տիրան Ա. Բհնյ. Փափագեան  
Հովի Ս. Յովակիմ եւ Աննա Եկեղեցւոյ  
Նախագահ Ծխական Խորհուրդի  
ՓԷՂԸՍ հայթօց.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 18, 1994 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 27, 1994-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Սոնիա Տումանեան
- Ռիչըրտ Նալպանտեան
- Տոքթ. Նորայր Մատանեան
- Չարլի Թէրզեան
- Տէնիս Վանտեր Միլ

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները. Հնչուն դրամի մուտքն ու ելքը չի համապատասխանէր տեղեկագրի պահանջին: Էջ 11-ի Գ. բաժինը ամբողջացած չէ: Էջ 7-ի մուտքի գումարները չեն համապատասխանէր Անդամական Ժողովին ներկայացուած տարեկան տեղեկագրի գումարին: Հակառակ անոր որ Էջ 12-ի վրայ պատասխանատու անձերը ստորագրած են, սակայն հոն չէ յիշուած հաշուական տեղեկագիրներուն աղբիւրը: Տարեկան Ժողովի դիւանի ընտրութիւնը եւս պէտք է կատարուի գաղտնի քուէարկութեամբ եւ երկպատիկ ցանկի վրայէն: Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ստորագրուի երկրորդ անձի մը կողմէ:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ